ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 75

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

«_30_» __01_ -ի 2019 թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը /այսուհետ՝ Պատվիրատու/՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, մի կողմից, և «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ Կատարող/՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Հ. Մարկոսյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների 2018/2019 ուսումնական տարվա անվճար ուսուցմամբ (նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերը հաստատելու մասին» N 686-Ն որոշմամբ և «Հայաստանի Հանրապետության 2019 թ. պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Պատվիրատուն հանձնարարում, իսկ Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել իր կանոնադրական գործառույթներով նախատեսված՝ «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 02 աղյուսակի «1045. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն» ծրագրի համար նախատեսված բյուջետային հատկացումների սահմաններում՝ *«12004. Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» միջոցառման* շրջանակներում **Երևանի պարարվեստի պետական քոլեջում** մինչև 327 սովորողի ուսանողական նպաստների (նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) տրամադրման և *«12002. Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» միջոցառման* շրջանակներում միջին 140 սովորողի կրթաթոշակի հատկացման պարտավորությունները՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի՝ հավելված N 1,

1.1.2. միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունում պետական բյուջեից ուսման վարձի փոխհատուցում ստացող սովորողների միջին տարեկան թվաքանակի մասին տեղեկանքի՝ հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. Պայմանագրի պահանջներին համապատասխան՝ Կատարողից ընդունել պատշաճ ձևով ու կարգով կատարված աշխատանքները և հաշվետվությունները.

2.1.2. Կատարողին ցուցաբերել մշակույթի և կրթության բնագավառում իրականացվող բարեփոխումների արմատավորմանն ուղղված անհրաժեշտ ուսումնամեթոդական և կազմակերպական օգնություն:

2.1.3. Պարբերաբար վերլուծել Կատարողի կողմից իրականացվող պարտավորությունները, մշակել առաջարկություններ գործունեության հետագա բարելավման վերաբերյալ, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման համար:

2.1.4. Սույն պայմանագրի 3.1-ին և 3.2-րդ կետերում նշված գումարները Պատվիրատուն պետք է վճարի Կատարողին սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ժամկետներում՝ Կատարողի՝ սույն պայմանագրում նշված գանձապետական հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով:

2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների ստուգել Կատարողի կողմից սույն պայմանագրի կատարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս կանոնադրական գործունեությանը:

2.2.2. Կատարողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկույթ սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին:

2.2.3.Պարբերաբար վերահսկել ներկայացվող հաշվետվությունների հավաստիությունն ու ճշտությունը:

2.2.4. Վերահսկել Կատարողին հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:

2.2.5. Ցանկացած ժամանակ լուծել սույն պայմանագիրը:

2.2.6. Պայմանագրով ամրագրված գումարի չափը փոփոխել՝ ավելացնել կամ նվազեցնել:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Ժամանակին լրիվ ծավալով, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1-ին կետում նշված աշխատանքները:

2.3.2. Պայմանագրի 3.1-ին և 3.2-րդ ենթակետերում նշված միջոցները ծախսել բացառապես սույն պայմանագրի 1-ին կետում նշված նպատակներին համապատասխան՝ ղեկավարվելով Պատվիրատուի կողմից հաստատված մեթոդական ցուցումներով և հրահանգներով:

2.3.3. Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2019 թ. փետրվարի 20-ը Պատվիրատուի հաստատմանը ներկայացնել Կատարողի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը՝ համապատասխան հիմնավորումներով: Նախահաշվի յուրաքանչյուր ծախսային ուղղության մեջ կատարվող փոփոխությունը **նախապես՝ մինչև փաստացի ծախսերի կատարումը,** համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Նախահաշվում փոփոխությունների ներկայացման առաջարկի վերջնաժամկետն է

2019 թվականի դեկտեմբերի 20-ը: Աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2019 թ. դեկտեմբերի 25-ը.

2.3.4. Պատվիրատուին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին:

2.3.5. Ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ սույն պայմանագրի կատարման համար առաջացած բոլոր տեսակի խոչընդոտները անհապաղ վերացնելու համար:

2.3.6. Պատվիրատուին ներկայացնել եռամսյակային և տարեկան ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2015 թվականի ապրիլի 1-ի N 176-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով: Բովանդակային (կիսամյակային և տարեկան) հաշվետվության հետ ներկայացնել իրականացված միջոցառումների մասին համապատասխան նյութեր՝ էլեկտրոնային կրիչներով:

2.3.7. Իրականացնել միջոցառումներ՝ նվիրված Երևանի պարարվեստի պետական քոլեջի հիմնադրման 95-ամյա հոբելյանին:

2.3.8. Քոլեջի դահլիճը նպատակային օգտագործման համար տրամադրել «Խորեոգրաֆիայի պետական թատրոն» ՊՈԱԿ-ին՝ Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամանակացույցին համապատասխան:

2.3.9. Պարտավորությունները չկատարելու կամ մասնակի կատարելու դեպքում Պատվիրատուին վերադարձնել հատկացված գումարը՝ նպաստառուներին չտրամադրված մասով:

2.4. Կատարողն իրավունք ունի՝

2.4.1. Պատվիրատուից պահանջել ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և Կատարողի կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված աշխատանքները.

2.4.2. Պատվիրատուից պահանջել վերացնել Կատարողի գործողություններից (անգործությունից) անկախ՝ Պատվիրատուի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները.

2.4.3. Վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում.

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

3.1. Սույն պայմանագրով պարտավորությունները կատարելու համար Կատարողին նախատեսված սոցիալական օգնության դրամական արտահայտությամբ ուսանողական նպաստները (բյուջեից) տարեկան կազմում են մինչև 213678.9 հազար (երկու հարյուր տասներեք միլիոն վեց հարյուր յոթանասունութ հազար ինն հարյուր) ՀՀ դրամ:

3.2. Պատվիրատուն պարտավորվում է Կատարողի միջոցով վճարել միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին կրթաթոշակ, որը տարեկան կազմում է մինչև 7980.0 հազար (յոթ միլիոն ինն հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանվելու դեպքում վերջինս, եթե Պատվիրատուին չի ներկայացրել դրա վերաբերյալ հիմնավոր բացատրություն, վճարում է տույժ Պայմանագրի գնի 0.01 (մեկ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացման յուրաքանչյուր օրացուցային օրվա համար:

4.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները Կատարողի կողմից առանց հիմնավոր բացատրության չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում վճարում է տուգանք չկատարված աշխատանքի 0,5 (հինգ տասնորդական) տոկոսի %-ի չափով:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից, գործում է մինչև 2019 թ. հունվարի 31-ը: Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի՝ առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության: Սույն Պայմանագրի գործողությունը տարածվում է 2019 թ. հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

6.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու կամ լրացուցիչ

համաձայնագիր /համաձայնագրեր/ ձևակերպելու միջոցով, որը /որոնք/ կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը /մասերը/:

6.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.4. Սույն պայմանագիրը կնքելիս կողմերը հաստատում են, որ դրանով իրենց շահերը և օրինական իրավունքները ոչ մի կերպ չեն խախտվում, կամ սահմանափակվում:

6.5. Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից /ներառյալ հավելվածները/, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

7. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն

Հ/Հ 900011031276, Հ/Հ 900011031433,
Հայաստանի Հանրապետության ՖՆ
գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02508054

Նախարարության գլխավոր
քարտուղար

_____ Ս. Մուրադյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ

Հ/Հ 900018001314, ՀՎՀՀ 01505065
Հայաստանի Հանրապետության ՖՆ
գործառնական վարչություն

Տնօրեն՝

_____ Հ. Մարկոսյան

Կ.Տ.